ՆԵՐԴՐՅԱԼ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ԱՎԵՏԻՔ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Ինչպես միջանկյալ, այնպես էլ ներդրյալ կառույցները ժամանակակից հայերենում հանգամանալից ուսումնասիրության կարիք են ղդում։ Մասնավորապես ներդրյալ կառույցներն իրենց լրացուցիչ դերով քերականագիտության մեջ առանձնացել են որպես շարահյուսական կարգ և բազմակողմանի քննություն են պահանջում։

Ռուսաց լեզվի քերականության 1960 թ. ակադեմիական հրատարակության մեջ ուսումնասիրված են ինչպես ներդրյալ նախադասությունները, այնպես էլ բառերն ու բառակապակցությունները՝ իրենց իմաստային զանազան դրսևորումներով։ Ներդրյալ համարվում են այնպիսի նախադասությունները, որոնք պարունակում են հիմնական նախադասության բովանդակությունից բխող լրացուցիչ տեղեկություններ, դիտողություններ, հիմնական նախադասության մեջ նշված տեղի, ժամանակի, գործողության վերաբերյալ որևէ ճշտում, կոնկրետացում, արտահայտված որևէ մտքի, երևույթի պատճառաբանություն, կերպարի, իրադրության բնութագրություն և այլն։ Այն նախադասությունները, որոնք լրացուցիչ, ուղեկցող դիտողություններ, տեղեկություններ են ներմուծում նախադասություն և արտասանությամբ առանձնանում են, կոչվում են ներդրյալ նախադասություններ[1]։

Որոշ լեզվաբաններ ներդրյալ են համարում շարահյուսական կառուցվածքով տարբեր այնպիսի նախադասություններն ու բառակապակցությունները, որոնք պարունակում են հիմնական նախադասության միտքը պարզաբանող լրացուցիչ տեղեկություններ և ուղեկցող դիտողություններ։ Ի տարբերություն միջանկյալ բառերի, բառակապակցությունների և նախադասությունների, դրանք չունեն վերաբերմունքային և զգացական իմաստներ[2]։

Ռուս լեզվաբաններից Ա. Ռուդնևը ընդհանրապես չի ընդունում ներդրյալ կառույցների (այսուհետև՝ ՆԴԿ)՝ որպես շարահյուսական առանձին կարգի, գոյությունը՝ պատճառաբանելով, որ ՆԴԿ-ի, որպես շարահյուսական ուրույն միավորի, առանձնացման համար դեռևս բավարար հիմք չկա, քանի որ դրանք չունեն իմաստային և կառուցվածքային այն ամփոփ ամբողջականությունը, որն անհրաժեշտ է շարահյուսական յուրաքանչյուր միավորի ընդունման և առանձնացման համար[3]։

Միջանկյալ և ներդրյալ կառույցներին այս տեսակետից որոշ վերապահումով պետք է մոտենալ, քանի որ դրանք խոսքային շղթայի մեջ միայն ուղեկցող դեր ունեն. միջանկյալ կառույցները՝ վերաբերմունքային իմաստային երանգներով, ՆԴԿ-ները՝ լրացուցիչ տեղեկություններով, դիտողություններով և այլն։ Այս առումով, բնականաբար, ՆԴԿ-ներն ավելի մեծ կիրառություն ունեն, քանի որ վերաբերմունքային երանգների համեմատությամբ լրացուցիչ այլևայլ տեղեկություններն ավելի բազմազան են։ Իմաստային և կառուցվածքային տեսակետից ՆԴԿ-ները քննելիս որոշ չափով պետք է շարահյուսական որևէ կարգի առանձնացման համար անհրաժեշտ

---

[1] «Грамматика русского языка», т. II, ч. II, М., 1960, с. 165.

[2] «Современный русский язык», под. ред. Галкиной-Федорук, М., 1957, с. 334.

[3] А. Г. Руднев, Синтаксис современного русского языка, М., 1968, с. 184.

նորմերից վերապահում անել, քանի որ միայն այդ ճանապարհով կարելի կլինի ըմբռնել ՆԴԿ-ների հարաբերական ինքնուրույնությունը։ Եվ դա բնական է։ Եթե ՆԴԿ-ները խոսքային շղթայի մեջ միայն ուղեկցող դեր ունեն, ուրեմն դրանք չեն կարող հանդես բերել իմաստային և կառուցվածքային այն ինքնուրույնությունը, որը հատուկ է ընդհանրապես նախադասությանը. հետևաբար, պետք է ընդունել ՆԴԿ-ների հարաբերական ինքնուրույնությունը։ Վերջապես, եթե ընդունվում է միջանկյալ կառույցների շարահյուսական կարգը, պետք է ընդունվի նաև ՆԴԿ-ների շարահյուսական առանձին միավոր լինելը, որի համար ավելի քան բավարար հիմքեր կան։

Հայ քերականագիտության մեջ ՆԴԿ-ներին անդրադարձել է պրոֆ. Վ. Առաքելյանն իր «Հայերենի շարահյուսություն» աշխատության մեջ։ Նա ուսումնասիրել է ներդրյալ նախադասությունները, տվել դրանց սահմանումը, ապա անդրադարձել ներդրյալ բառերին ու բառակապակցություններին՝ քննելով նաև դրանց՝ հիմնական նախադասության կազմի մեջ մտնելու ձևերն ու միջոցները։ Ներդրյալ են համարված «այն նախադասությունները, որոնք խոսքի հիմնական շղթայից անջատվում են հնչերանգային կապերով, բայց խոսքի մեջ մտնող որևէ նախադասության համար պարունակում են կողմնակի հաղորդում կամ որևէ առնչությամբ բացահայտում են նրան վերաբերող այլևայլ հանգամանքներ»[4]։ Աշխատության մեջ բնութագրված է ներդրյալ նախադասությունների վեց կարգ[5]։

Միջանկյալ և ներդրյալ կառույցների ընդհանրություններից մեկն այն է, որ դրանք շարահյուսորեն չեն կապվում հիմնական նախադասության հետ, և սա էլ պայմանավորում է դրանց՝ նախադասության հետ քերականորեն չկապվող բառերի, արտահայտությունների և նախադասությունների քերականական ավելի ընդհանուր կարգի մեջ ամփոփելու հանգամանքը։ Միջանկյալ և ներդրյալ կառույցները պետք է դիտել որպես քերականական նույն երևույթի տարբեր դրսևորումներ, որոնց գործածությունը խոսքային շղթայի մեջ, վերջին հաշվով, հետապնդում է նույն նպատակը՝ ավելի ամբողջական, պատկերավոր ու շոշափելիորեն ըմբռնելի դարձնել հեղինակային խոսքը։ Այս է պատճառը, որ խոսքային շղթայի մեջ հաճախ հանդիպում ենք և՛ միջանկյալ, և՛ ներդրյալ կառույցների, որոնց գործածությունը պայմանավորված է հեղինակային տվյալ խոսքի առանձնահատկություններով։ Ներդրյալ և միջանկյալ կառույցները որոշ առումով քննել ենք զուգահեռ ձևով, որովհետև այդ դեպքում ավելի դյուրին կըմբռնվեն յուրաքանչյուրի իմաստային և կիրառական առանձնահատկությունները, ինչպես նաև ավելի պարզ կդառնա հիմնական նախադասության հետ շարահյուսական կապի անհնարինությունը։ ՆԴԿ-ների համեմատական քննությունն օժանդակում է դրանց, որպես շարահյուսական ինքնուրույն միավորների, ամփոփ արտահայտմանը։ Ի տարբերություն միջանկյալ շատ կառույցների, որոնք հիմնականում կազմավորված ու կայուն արտահայտություններ են, ՆԴԿ-ները կայուն արտահայտություններ չեն, հետևաբար, ավելի բազմաղան են ու տարատեսակ, կազմավորվում են անմիջապես խոսքի ընթացքում, որից դուրս, որպես այդպիսիք, դադարում են գոյություն ունենալուց։

Ժամանակակից հայերենում ՆԴԿ-ների առատությունը և գեղարվեստական խոսքում դրանց ունեցած կարևոր դերը անհրաժեշտ են դարձնում ՆԴԿ-ների հանգամանալից ուսումնասիրությունը և դասակարգումը։ Ինչպես ասվեց, ՆԴԿ-ներն իրենց կիրառություններով և գործածության նպատակներով բազմաղան են։ Դրանք ունենալով մեկ ընդհանուր գիծ՝ հիմնական նախադասության կամ նրա որևէ անդամի վերաբերյալ լրացուցիչ, կողմնակի տեղեկություններ հաղորդելը, ձևախմաստային առումով խիստ տարբերվում

---

4 Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. II, Երևան, 1964, էջ 448։

5 Նույն տեղում, էջ 447—450։

են միմյանցից։ Ըստ այն հատկանիշի, թե ՆԴԿ-ները շարահյուսական ի՞նչ միավորի հետ են առնչվում, դրանք բաժանվում են երկու խմբի.

1. ՆԴԿ-ներով կարող են լրացուցիչ տեղեկություններ կամ բացատրություններ տրվել խոսքի մեջ գործածված որևէ ամբողջական նախադասության վերաբերյալ։ Այս դեպքում ՆԴԿ-ն վերաբերում է ամբողջ նախադասությանը (իմաստային առումով), օրինակ.

... Ու ջնջում եմ
էլեկտրական լամպագրքի այն խորհուրդը,
Թե «Շահավետ, հուսատու է փողը պահել դրամարկղում»
(Փող ունենամ՝
Կհասկանամ
Առանց և այդ լամպագրքի)... (ՊՍ, ԵԺ, 1, 345)։

Այս կարգին պատկանող ՆԴԿ-ները կարող են վերաբերել ոչ միայն մեկ առանձին նախադասության, այլև ամբողջ խոսքային շղթային։ Դա բխում է դրանց պարունակած ավելի ընդհանուր տեղեկություններից, և սա էլ պայմանավորում է դրանց՝ խոսքային ավելի մեծ միավորներին վերաբերելը։ Այսպիսի ՆԴԿ-ները պարունակում են տեղային կամ ժամանակային տեղեկություններ, որոնք իմաստային առումով ավելի մեծ ընդգրկում ունեն, օրինակ. «Ծանոթացա ահա թե ինչպես։ Մի օր անցնում էի փողոցով (այս բոլորը պատահեց Վարշավայում)» (ՆԴ, ԵԺ, 3, 537)։

2. ՆԴԿ-ներով կարող են տեղեկություններ հաղորդվել հիմնական նախադասության որևէ անդամի մասին, ինչպես՝ «Այդ միջոցին այրի Օսանի պսակած տղան, որին թաբախ ման ածող Ցական էին ասում (նա շրջիկ մրգավաճառ էր), տուն դարձավ դատարկ թաբախը գլխին, կշեռքն ուսին, չիբուխը բերնին» (ՆԴ, ԵԺ, 1, 21)։

Այսպիսի ՆԴԿ-ները կարող են պարունակել հերոսի արտաքինի վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև արտահայտել դանադան կոնկրետացումներ, օրինակ. «Մի ուրիշը (դրանք Զավենի կլոր գրերն են) ՊԱՎԼԵԻ դիմաց փորել է ՄԱՅՈՐ» (ՀՄ, 0, 110—111)։

Հիմնական նախադասության որևէ անդամի մասին լրացուցիչ տեղեկություններ հաղորդող ՆԴԿ-ները հետաքրքրական դրսևորումներ են ունենում հատկապես չափածո խոսքում, որտեղ դրանք ստանում են մեծ արտահայտչականություն և նպատակասլացություն։ Բանաստեղծը դրանց օգնությամբ հաճախ արտահայտում է իր խոսքի ենթատեքստը, իր դնահատականն այս կամ այն երևույթի վերաբերյալ, օրինակ.

Առանց երդման էլ ես հավատում եմ,
. . . . . .
Որ աղջկական քո մաքուր բարձին
Թեքված ես տեսնում մի ծերուկ արծիվ
(Անգամ էլ լինի՝ արծիվ է թվում),
Որ քեզ աշխարհում ոչի՞նչ չի թվում... (ՊՍ, ԵԺ, 1, 276)։

Ընդհանրապես ՆԴԿ-ների՝ չափածո խոսքում ունեցած կիրառություններին պետք է մոտենալ առանձնահատուկ ձևով, քանի որ դրանք այստեղ հանդես են գալիս բանաստեղծական մտքին զուգահեռ և որոշ չափով դառնում այդ միտքը կրող մասերից մեկը՝ այդպիսով առանձնանալով իրենց այլ կիրառություններից, ուր կրում են միայն այն բովանդակությունը, որն արտահայտում են։

Ժամանակակից հայերենում ՆԴԿ-ների իմաստային քննությունը հանգեցնում է դրանց դասակարգմանը.

1. ՆԴԿ-ները կարող են արտահայտել այնպիսի տեղեկություններ, որոնք պարզաբանում են նկարագրվող իրավիճակը, պարզեցնում ներկայացվող

դրությունը՝ ավելի հասկանալի դարձնելով հեղինակային խոսքը, օրինակ. «...Դու քու սուտ աղոթքի ու գրի համար քսան մանեթ ես առնո՞ւմ, էն էլ ումի՞ց (Ցականը բռնեց Թորոսի թևից և առաջ քաշեց),— սրանի՞ց, էս նաչար հալևորի՞ց» (ՆԴ, ԵԺ, 1, 24)։

Այս կարգի ՆԴԿ-ների միջոցով կարող է ներկայացվել խոսակցի կամ մի այլ անձնավորության՝ տվյալ իրավիճակի թելադրանքով բռնած դիրքը, հոգեկան ապրումը, խոսքը և այլն, օրինակ. «Նա արագությամբ բարձրացրեց գլուխը, խելագարի հայացքով նայեց իշխանուհու դեմքին (իշխանուհին, կարծես սարսափած՝ մի քայլ ետ գնաց։ Յուր բերանից անզգայաբար դուրս թռած վերջին երկու բառերը նրան այժմ կյանքից զրկվելու չափ ահավոր թվացին) և, թողնելով նրա ձեռքն յուր ձեռքերի միջից, կամաց վեր կացավ շոքաձ տեղից» (ՆԴ, ԵԺ, 2, 120)։

2. ՆԴԿ-ները կարող են պարունակել տեղային զանազան կոնկրետացումներ, որոնք որոշ դինամիզմ են հաղորդում հեղինակային խոսքին՝ իրադրությունը դարձնելով ավելի շարժուն ու կենդանի։ Այս կարգի ՆԴԿ-ները նույնպես օժանդակում են դրության, իրավիճակի պարզեցմանը, հեղինակային խոսքի արտահայտչականությանը, սակայն սրանք չպետք է շփոթել դրությունը պարզաբանող ՆԴԿ-ների հետ, որոնք ավելի ընդհանուր գծերով են ներկայացնում իրավիճակը և ավելի հետևանքային երանգ ունեն։ Առաջիններն աչքի են ընկնում հիմնական նախադասության բովանդակության հետ ավելի սերտ իմաստային կապով և ավելի խոսակցական երանգ ունեն։ Դրանք հաճախ են հանդիպում հեղինակային նկարագրությունների մեջ, մինչդեռ տեղային կոնկրետացում պարունակող ՆԴԿ-ների գործածությունը մեծ է հատկապես երկխոսություններում, ինչպես՝ «Այս վերջին տարումս դու իմ հոգին այստեղ հասցրիր (նա ցույց տվավ յուր կոկորդը)» (ՆԴ, ԵԺ, 1, 136)։

Այսպիսի ՆԴԿ-ները հիմնականում մատնացույց են անում կատարված, կատարվող կամ կատարվելիք որևէ գործողության տեղը և պարունակում են այնպիսի բայեր, ինչպիսիք են՝ ցույց տալ, մատնացույց անել, նայել, շոշափել, տնտղել, բռնել, քսել, սեղմել և այլն։

Տեղային կոնկրետացում պարունակող ՆԴԿ-ներն ավելի հանկարծածին են, քան մյուսները, քանի որ, ինչպես ասվեց, դրանց գործածությունը տարածված է հատկապես երկխոսություններում, որոնց դինամիզմն էլ հենց պայմանավորում է ՆԴԿ-ների այդպիսի բնույթը։ Այս կարգի ՆԴԿ-ները, որպես կանոն, ծավալուն չեն լինում, որովհետև կոչված են համառոտ կոնկրետացումներ տալու հեղինակային խոսքին՝ առանց խախտելու նրա դինամիզմը։

3. ՆԴԿ-ները կարող են պարունակել զանազան ժամանակային կոնկրետացումներ, որոնք նկարագրվող երևույթի մեջ ընթերցողին խորացնելու, երևույթը նրան ավելի ըմբռնելի դարձնելու միտում ունեն, օրինակ. «...Հաստատակամ մարդու նման միշտ առաջ էր գնում, առանց մտածելու գեթ, թե ի՞նչ պիտի ոտեր ճանապարհին և ինչպե՞ս պիտի հասներ Թիֆլիս այդպիսի ցուրտ եղանակին (այդ ժամանակ աշուն էր), և այն էլ ոտով ու ամառվա շորերի մեջ» (ՆԴ, ԵԺ, 1, 409)։

Ինչպես այս, այնպես էլ մյուս կարգերին պատկանող ՆԴԿ-ները հմուտ գործածության դեպքում կարող են մեծ արտահայտչականություն ստանալ ոչ միայն իրենց գործառույթային, այլև հեղինակային վերաբերմունքի տեսակետից, ինչպես՝ «Ռևազի (կարծեցյալ կորստատեր Ռևազ Մովսիսյանը կտրականապես հայտարարեց, որ ինքը լավ չի հիշում, թե իրենք երբևէ ունեցե՞լ են ոչխարներ) և մանավանդ նրա կնոջ մանրակրկիտ հարցաքննությամբ պարզեց, որ երկու օր առաջ (սեպ. օգոստոսի 27-ին, երեկոյան ժամը հինգի մոտերքը, ոչ շուտ չորսն անց երեսունից, ոչ ուշ հինգ անց երեսունից) կորել են Գետամեջ գյուղի բնակիչ քաղաքացի Ռևազ Գևորգի Մովսիսյանի չորս ոչխարները... մեկը՝ մեկ տարեկանը՝ խրտնող, երեքը՝ հանգիստ բնավորության պատկանող (առաջինի պատճառով էլ,— հաշվի առնելով կորստատիրուհի

թագուհի հորենական ազգանվամբ Կարապետյանի կարծիքը,— վերոհիշյալ չորս ոչխարները հեռացել են տիրոջական դռնից)» (ՀՄ, 0, 43)։

4. ՆԴԿ-ները կարող են բնութագրել մտքի, գործողության արտահայտման ձևը, օրինակ. «...Կյանքն ինքնըստինքյան հուսահատեցուցիչ է (Շահյանն այդ բառն արտասանեց լեզվի ծիծաղելի խճճումներով, որից նա ավելի շփոթվեց), որովհետև... ընդհանուր բացարձակ ունայնության գիտակցությունը չափից դուրս արդեն ճնշում է մարդուս...» (ՆԴ, ԵԺ, 8, 279)։

Ինչպես գիտենք, միջանկյալ կառույցների մի տեսակը նույնպես բնութագրում է մտքի արտահայտման ձևը։ Սակայն դրանք չեն նույնանում այս կարգի ՆԴԿ-ների հետ։ Միջանկյալ կառույցները բնութագրում են մտքի արտահայտումը զուտ հեղինակային-վերաբերմունքային տեսակետից և ցույց են տալիս, թե հեղինակը, խոսողը տվյալ դեպքում մտքի արտահայտման որ ձևն է նախընտրում։ Այդպիսի միջանկյալ կառույցներ են՝ այսպես ասած, ճիշտն ասած, անկեղծ ասած, պարզ եմ ասում և այլն։ Մինչդեռ ՆԴԿ-ները բնութագրում են այն հանգամանքները, որոնք ձևի տեսակետից ուղեկցում են գործողությանը։ Այս կարգի ՆԴԿ-ները զերծ չեն վերաբերմունքային որոշ երանգներից։ Ընդհանրապես, բոլոր ՆԴԿ-ներն էլ իրենց պարունակած լրացուցիչ տեղեկություններով, բացատրություններով, պարզաբանումներով հանդերձ, ստանում են վերաբերմունքային զանազան երանգներ, որոնց դրսևորման ձևերի մեջ, սակայն, խիստ տարբերվում են միջանկյալ կառույցներից։ Ամեն դեպքում դրանք մնում են հիմնական նախադասության կամ նրա որևէ անդամի մասին լրացուցիչ հաղորդումներ։ Այս կարգի ՆԴԿ-ները, իմաստային առումով, կարող են հիմք դառնալ արտահայտվելիք մտքերի և կատարվելիք գործողությունների համար։ Բայց սա չպետք է դարձնել առանցքային՝ խոսքի, գործողության արտահայտումը բնութագրող ՆԴԿ-ների դասակարգման համար, քանի որ դա վերաբերում է միայն կիրառության ոլորտին և ամբողջապես կախված է այն խոսքային շղթայի առանձնահատկություններից, որի կազմում հանդես է գալիս ՆԴԿ-ն, մտքերի, գործողությունների այն հաջորդականությունից, որոնց ամբողջական արտահայտման համար հեղինակի կողմից անհրաժեշտ է համարվել տվյալ ՆԴԿ-ի գործածությունը։ Հենց իմաստային այդ կապն է, որ որոշ դեպքերում թույլ չի տալիս հիմնական նախադասության կազմից հեռացնել ՆԴԿ-ն՝ առանց խաթարելու բուն նախադասության բովանդակության ամբողջականությունը։

5. ՆԴԿ-ներով կարող են արտահայտվել խոսողի նպատակը, խոսքի, գործողության պատճառաբանումը, հիմնավորումը, որոնք հեղինակը ներկայացնում է նախադասության հիմնական միտքը ավելի ընդգծելու համար, օրինակ.

> Լույսերը վառվում են։ Դու լույսրս մարում ես
> (Ուզում ես, որ նստենք մթան մեջ),
> Մերթ տալիս անունըս, մերթ կրկին լռում ես,
> Տիրաբար շրջում ես իմ տան մեջ» (ՊՍ, ԵԺ, 1, 251)։

Մասնավորապես բանաստեղծական խոսքի մեջ այս կարգի ՆԴԿ-ները քնարական նուրբ երանգավորում են ստանում՝ կախված խոսքային ամբողջ շղթայի մտքից և իրենց շեշտվածքով օժանդակում են ամբողջ բանաստեղծության մտքի ըմբռնմանը։ Այս կարգի մեջ են մտնում նաև այնպիսի ՆԴԿ-ները, որոնք հիմնավորում, պատճառաբանում են հեղինակային տվյալ խոսքի մեջ որևէ բառի կամ արտահայտության անսովոր գործածությունը, ինչպես. «...Տիկ. Դայանեն, նախքան նրա բերանը բանալը, հասկացավ, թե ինչ պիտի ասեր նա և այդ պատճառով չկամենալով ենթարկվել այդ տանջանքին (որովհետև նա այնքան բարի էր, որ բոլորովին չէր սիրում, երբ նրան մի որևիցե բանի համար սկսում էին շնորհակալություն հայտնել), շտապեց ասել ժպտալով...» (ՆԴ, ԵԺ, 1, 425—426)։

6. ՆԴԿ-ով կարող է արտահայտվել խոսքի կամ գործողության հետևանքը, եզրակացությունը, օրինակ. «Շունը հետքով պտտվեց գոմի շուրջ, եկավ հոտոտեց տան դռները (արձանագրվեց, որ ոչխարները պտտվել են գոմի շուրջ), հետո շունը հոտոտեց տաշտակը («ոչխարները լվացքի տաշտակից ջուր են խմել»), ապա հետքը նորից գոմ տարավ...» (ՀՄ, 0, 43—44)։

Նույն երևույթի վերաբերյալ նույն կարգի ՆԴԿ-ների զուգահեռ գործածության դեպքում դրանց միջև ի հայտ է գալիս մի ներքին կապ, որի հետևանքով այդ ՆԴԿ-ները դառնում են նույն շղթայի միմյանց հետ կապված օղակներ։ Վերը բերված օրինակում նույնիսկ զեղչում է տեղի ունեցել։ Այսպիսի ՆԴԿ-ներն իրենց զուգահեռ կիրառությունների դեպքում կազմում են ՆԴԿ-ների մի ամբողջ համակարգ, որի գոյությունը խոսքային շղթայի մեջ տեղին է ու պատճառաբանված։

7. ՆԴԿ-ով կարող է տրվել ընթերցողի մոտ բուն նախադասության բովանդակությունից բխող հարցի պատասխանը։ Որպես կանոն, այսպիսի ՆԴԿ-ները գործածվում են հեղինակային խոսքը ընթերցողի համար անհասկանալի չթողնելու, իմաստային առումով այն ամբողջացնելու միտումով, ինչպես՝ «...Մանեն երկու տոմսակ էր ստացել նրանից—մեկն իր, մյուսը եղբոր համար։ (Սկեսուրը, իբրև հին կին, իր ամբողջ կյանքում թատրոն ասած բանը տեսած չէր և չէր ուզում տեսնել)» (ՆԴ, ԵԺ, 3, 62)։

Այսպիսի ՆԴԿ-ները զուտ տեքստային բնույթ ունեն և ստեղծվում են ներկայացվող մտքից, գործողությունից անմիջապես հետո։ Սրանց գործածությունը լավագույն ապացույցն է այն կարծիքի, որ ՆԴԿ-ները խոսողի, հեղինակի կողմից նախապես պլանավորված չեն լինում, այլ ծնվում են անմիջապես խոսքի պրոցեսում։ Այս կարգի ՆԴԿ-ները զուգահեռ վկայությունների միջոցով հիմնավորում են խոսողի միտքը, այն դարձնում ավելի համոզիչ։

8. ՆԴԿ-ների միջոցով հեղինակը կարող է մեջ բերել զուգահեռ պատկերներ՝ տվյալ խոսքային շղթայի բովանդակությունն ավելի ըմբռնելի դարձնելու, ինչպես նաև նրան զանազան երանգներ հաղորդելու համար, օրինակ. «Երբեմն հովիվներն իջնում են նայելու, և հին հովիվներից մեկը նոր հովիվներին պատմում է այն ուրախ երեկոյի աղմուկներից։ (Գլխարկի մասին արձանագրությունների մեջ գրված է. «Քաղաքացի Իշխան Անտոնյանը սերժանտ Սարգսյանի կողմից բերման ենթարկվելիս իրեն թափահարեց, որի հետևանքով սերժանտ Սարգիս Սարգսյանի գլխարկը նույն սերժանտ Սարգիս Սարգսյանի գլխից ընկնելով՝ գլորվեց ձորը։ Այն գտնելու մեր ճիգերը արդյունքներ չտվեցին»)» (ՀՄ, 0, 50)։

9. Կերպարի նկարագիրն ավելի ամբողջական դարձնելու համար, տվյալ խոսքային շղթայից դուրս ՆԴԿ-ով կարող է տրվել լրացուցիչ բացատրություն։ Սրանք չպետք է շփոթել նախորդ կարգի մեջ մտնող ՆԴԿ-ների հետ, որոնց զուգահեռ լրացուցիչ տեղեկությունները բացառապես խոսքային ընդհանուր շղթայի գաղափարին, մտքին են վերաբերում, այդ մտքի ավելի ամբողջական արտահայտությանն են օժանդակում, մինչդեռ այս կարգի ՆԴԿ-ները պարունակած լրացուցիչ տեղեկություններով նպաստում են կերպարների ամբողջական նկարագրի ստեղծմանը։ Դրանց միջոցով կերպարը մեզ երևում է նաև այլևայլ իրադրություններում, այլևայլ դրսևորումներով, ինչպես՝ «Ավագ հորեղբայրը կանանց առավ կրկնակի շրջանի մեջ։ (Հետո, բանտարկվելուց հետո, այնպես ստացվեց, որ հորեղբայրը կանանց շուրջ եռակի շրջանի քաշեց. անաստված Սաթոն մեռավ. տխրելը՝ տխրել, բայց հորեղբայրն ուրիշ կին բերեց տուն. սա դուրս եկավ ջղային, կապտող, նիհար ու կռվարար. միասին ապրեցին մի երկու տարի, հորեղբոր մազերի կեսն սպիտակեց, հետո կինը գյուղխորհրդի նախագահով-քանով բաժանվեց հորեղբորից. շնորհակալ ենք. սենյակներից մեկն՝ իրեն, շորերի պահարանն՝ իրեն, մահճակալներից մեկն՝ իրեն, կովն՝ իրեն, բահերից մեկն՝ իրեն, թող տանի մտցնի աչքը։

Հինգ ոչխարից երեքն՝ իրեն, աման-չամանն՝ իրեն։ Դեմ չէր հորեղբայրը. կին է, աչքն ապրուստի է, թող կուշտ լինի աչքը։ Բայց ահա եկավ գիշերը, և եղավ վատից վատը. կինը, ինչպես տրամաբանական է, իր անկողինը բացեց իր սենյակում, գյուղխորհրդով իրեն տրված մահճակալին։ Հենց այդտեղ էլ Ավագը չհամբերեց.— Պահարանը վերցրիր՝ հասկացանք, կովը՝ հասկացանք, բահն էլ հասկացանք։ Գյուղխորհուրդ բերեցիր՝ լավ արեցիր, թող օրենքով լիներ... Բա էդ շոկ քնե՞լդ ինչի համար է։ Հո հարբուխ չե՞նք)» (ՀՄ, 0, 67—68)։

Այս կարգի ՆԴԿ-ները կարող են հանդես գալ ամբողջական պարբերություններով, իրենց առանձնացած, օժանդակ բովանդակությամբ ու կառուցվածքով ստեղծել ներդրյալ խոսքային շղթաներ, որոնց բովանդակությունը կարող է զարգանալ խոսքի հիմնական բովանդակությանը զուգահեռ՝ իր ներքին օրինաչափություններով։ Այս դեպքում արդեն ոչ թե որևէ կոնկրետ ՆԴԿ-ն է օժանդակում հիմնական բովանդակության ըմբռնմանը, այլ ներդրյալ ամբողջ պարբերությունների արտահայտած օժանդակ բովանդակությունը։ Երբեմն այսպիսի ներդրյալ ներմուծումներն ավելի ծավալուն են լինում, քան հեղինակային հիմնական խոսքը։

10. ՆԴԿ-ով կարող է տրվել գործողության, երևույթի ընդհանուր անվանումը, որպես կոնկրետ գործողության, երևույթի հետևանք։ Այսպիսի ՆԴԿ-ներն օգնում են հեղինակային խոսքի մեջ ավելորդաբանություններից խուսափելուն՝ օրինակ. «Մի որոշ ժամանակից հետո մենք մեծ մարդիկներ կունենանք, այնքան մեծ, որ մենք նրանցով կկարողանանք պարծենալ... (կեցցեներ և ծափահարություններ)» (Մ. Եժ, 1, 257)։

11. ՆԴԿ-ով կարող են արտահայտվել հակադրություն, համեմատություն, օրինակ. «Օղերը տեսնելուն պես նրա աչքերը փայլեցին, չգիտեմ՝ հիացմունքի՞ց թե նախանձից։ (Սպիտակահեր ամուսնու մոտ այդ կինը ավելի ևս ջահել երևաց իմ աչքին)» (ՆԴ, Եժ, 2, 441—442)։

12. ՆԴԿ-ների միջոցով, մանավանդ բանաստեղծական խոսքի մեջ, հեղինակն այլևայլ նպատակներ հետապնդելով՝ կարող է խոսել նաև իր մասին։ Այդպիսի ՆԴԿ-ները որոշ հետևանքային երանգ ունեն, օրինակ.

Ե՛վրս մի անգամ չհարգեմ նրանց,
Ովքեր մթնում են,
Երբ կարող էին միշտ մնալ լուսե,
(Ինձ էլ երբեմըն խավարն է գրկում)...
Ովքեր վատնում են
Իրենց ուժերը փսփրսուքի մեջ,
Մինչ կարող էին բարձրաձայն խոսել
(Երբեմն նաև ես ի՛նձ չեմ հարգում)...
Երբեմըն նաև ես ի՛նձ չեմ հարգում... (ՊՍ, Եժ, 1, 382)։

13. Ներդրյալ արտահայտության կամ նախադասության միջոցով կարող է տրվել հիմնական նախադասության մեջ գործածված որևէ օտար բառի, արտահայտության կամ նախադասության բացատրությունը։ Դա կարող է կատարվել մի քանի ճանապարհով.

ա) Որևէ օտար բառի գրական հայերենով բացատրությամբ, օրինակ. «Մի ձեռքին բռնած էր կես-թունգանոց մի գավ, որի պատերը տարիների ընթացքում սևացել էին կարմիր գինուց, մյուս ձեռքին կարմիր աղլուխի մի կապոց, որի մեջ կար մի քիչ «դոշ» (ձուկ), մի քիչ կանաչի, մի կապոց կարմիր բողկ և երկու սպիտակ «շոթի» (վրացական երկայն ու նեղ հաց), որոնց սուր ծայրերը երկար ականջների պես դուրս էին ցցված աղլուխի կապի արանքներից» (ՆԴ, Եժ, 1, 55)։

բ) Օտար արտահայտության բառացի թարգմանությամբ, օրինակ. «Զաչեմ շեղոդնյա նե բղալի գաղյաչեյ վադը (ինչո՞ւ այսօր տաք ջուր չվերց-

րիք),— կանչեց նրա հետևից հրեա կինը ռուսերեն, հրեաներին հատուկ առոգանությամբ ս-ն շ և ր-ն ղ հնչելով» (ՆԴ, եժ, 1, 178)։

գ) Բարբառային արտահայտությունների գրական բացատրություններով, օրինակ. «Էգուց էլ որ գլուխս վեր դնեմ (մեռնեմ), իսկի էլ չի մաշվի, որ կրծքիս ման դնեն (ժողովարարությամբ թաղեն)» (ՆԴ, եժ, 3, 11—12)։

դ) Հաճախ գրական բառի կողքին ներդրյալ կիրառությամբ տրվում է նրա բարբառային կամ օտար համարժեքը։ Սա, իհարկե, հնացած երևույթ է և մեր անցյալի հեղինակներն օգտագործել են այն պատճառով, որ տվյալ ժամանակահատվածում ժողովրդի մոտ ավելի գործածական է եղել տվյալ բառի բարբառային կամ օտար համարժեքը, և գրական արտահայտությունը հեղինակը բացատրել է օտար կամ բարբառային արտահայտության ներմուծությամբ, օրինակ. «Սա ավելի նման էր մի վարսավիրի (պարիկմախերի) խանութին, միայն այն զանազանությամբ, որ սա ավելի ճոխ էր զարդարված» (Մ, եժ, 2, 21), կամ՝ «...Հետո սկսավ հաճախորդների (մուշտարիների) ել ու մուտքը քննել և նրանց հետ խոսելու դժվար քերականությունը ուսումնասիրել...» (Մ, եժ, 2, 12)։

ե) Ներդրյալ օտար բառի միջոցով հեղինակը կարող է հուշել նախադասության մեջ գործածված համանուն բառի տվյալ նշանակությունը, օրինակ. «Ապա գոմում շանը վերցնել տվեցին ոչխարների հոտը (запах) *ու բռնեցին հետքը» (ՀՄ, 0, 43)։*

14. ՆԴԿ-ն կարող է ցույց տալ, որ խոսքի մեջ տեղ գտած տվյալ արտահայտությունը, լրացումը հեղինակինն է, թարգմանչինը կամ մեկ ուրիշինը, ցույց տալ տվյալ գրքի հրատարակության ժամանակը, տեղը, մեջբերման էջը, ինչպես նաև պարունակել զանազան ծանոթություններ։ ՆԴԿ-ն կարող է լինել որևէ համառոտագրության բաց արտահայտությունը, ինչպես նաև որպես ներդրություն նախադասության մեջ կարող է ներմուծվել այս կամ այն տառի թվական համարժեքը (կամ հակառակը) և այլն։ Այս կարգի ներդրությունները հիմնականում տեխնիկական նշանակություն ունեն և խոսքի մեջ ունեցած իրենց դերով չեն կարող մասնակցել ընդհանրապես ՆԴԿ-ների սահմանման և իմաստային դասակարգման գործին, որովհետև, ինչպես ասվեց, դրանք լոկ տեխնիկական ներմուծումներ են և, իմաստային առումով, չեն կարող համեմատվել մյուս ՆԴԿ-ների հետ, որոնք իմաստային և կառուցվածքային ամփոփ ինքնուրույնություն ունեն։

Ներդրյալ արտահայտությունների և նախադասությունների գործածությունը մեծ է հատկապես դրամատիկական ստեղծագործություններում։ Դրանց միջոցով հեղինակը որոշում է հերոսների համապատասխան շարժումը, բռնելիք դիրքը, բեմական կահավորումը և այլն, օրինակ. «Թանգիկ.— (Սարսափով) էդ մի ասի, մի ասի... ես կմեռնեմ...

Եսթեր.— Ուրիշ ճամփա չունես։ Քանի ողջ ես, արյունը անպակաս կլինի էս քաղաքում... (Նորից է նայում զննական հայացքով)։ Աղոթք էլ արա։ (Հեռանում է դեպի դուռը)։ Արի դուռը պինդ փակիր» (ԴԴ, եժ, 5, 131—132)։

Ներդրյալ բառերն ու բառակապակցությունները ժամանակակից հայերենում անհամեմատ ավելի սակավաթիվ են, քան ներդրյալ նախադասությունները, և ՆԴԿ-ների դասակարգման համար հենվել ենք հիմնականում ներդրյալ նախադասությունների իմաստային դրսևորումների վրա։ Եվ ընդհանրապես, հենց ներդրյալ նախադասությունների իմաստային բազմազանությունն է, որ հիմք է հանդիսանում ՆԴԿ-ների շարահյուսական կարգի ըմբռնման համար։ Սակայն ընդհանուր սահմանումից ներդրյալ բառերն ու բառակապակցությունները դուրս թողնելը անտեղի ենք համարում, քանի որ առանց դրանց այն թերի կլինի։ Ներդրյալ բառերն ու բառակապակցությունները չեն կարող որոշիչ դեր ունենալ ՆԴԿ-ների սահմանման ու դասակարգման գործում, քանի որ հիմնական նախադասության կամ նրա որևէ անդամի վերաբերյալ լրացուցիչ, ուղեկցող տեղեկություններ պարունակող ներդրությունը ենթադրում է

որոշ իմաստով ծավալուն արտահայտություն, որը պահանջում է ավելի նախադասության կաղապար, քան բառի ու բառակապակցության։

Ժամանակակից հայերենում ՆԴԿ-ներն իմաստային մեծ բազմազանություն են հանդես բերում՝ ստանալով ամենատարբեր երանգներ և, այս առումով, մակերեսային քննության դեպքում կարող են շփոթվել միջանկյալ կառույցների հետ։ Սակայն միջանկյալ կառույցները, հենց վերաբերմունքային երանգներով էլ գործածվում են խոսքի մեջ։ Ճիշտ է, իմաստային առումով դրանք ազդվում են հիմնական նախադասության բովանդակությունից և որոշ կողմնակի երանգավորում ստանում, սակայն առանց այդ երանգավորման էլ դրանք միշտ պահպանում են իրենց հեղինակային-վերաբերմունքային իմաստները։ Այլ են ՆԴԿ-ների իմաստային դրսևորումները։ ՆԴԿ-ների վերաբերմունքային իմաստները ամբողջովին բխում են հիմնական նախադասության բովանդակությունից։ ՆԴԿ-ն, այսպիսով, դառնում է այդ երանգավորման զուտ մեխանիկական կրողը, իսկ իմաստային այդ երանգը ՆԴԿ-ի առանձնացման հետ անհետանում է։ ՆԴԿ-ն ոչ թե իր արտահայտած իմաստով է դառնում վերաբերմունքային, այլ պարունակած լրացուցիչ տեղեկություններով, զանազան կոնկրետացումներով ու բացատրություններով խոսքային շղթայի ընդհանուր համակարգում դառնում է հեղինակային այս կամ այն վերաբերմունքի, այս կամ այն երևույթի վերաբերյալ նրա գնահատականի կրողը։

Քանի որ ՆԴԿ-ները շարահյուսորեն չեն կապվում հիմնական նախադասության հետ և՛ բանավոր, և՛ գրավոր խոսքում, բնականաբար, առանձնանում են նրանից։ Գրավոր խոսքում ՆԴԿ-ների առանձնացումը հիմնական նախադասությունից բխում է ՆԴԿ-ների հնչերանգային առանձնահատկություններից. դրանք հիմնական նախադասությունից անջատվում են արտասանական դադարներով և արտասանվում են համեմատաբար արագ տեմպով։ Գրավոր խոսքում ՆԴԿ-ները բուն նախադասությունից անջատվում են հիմնականում փակագծերով, սակայն կարող են անջատվել նաև ստորակետ-գծերով։

Այսպիսով, ելնելով այս ամենից, մենք տալիս ենք ներդրյալ արտահայտությունների հետևյալ սահմանումը. Ներդրյալ կոչվում են այն բառերը, բառակապակցությունները և նախադասությունները, որոնք խոսքի մեջ մտնող որևէ նախադասության, նրա որևէ անդամի կամ խոսքային ամբողջ շղթայի վերաբերյալ պարունակում են լրացուցիչ, բայց անհրաժեշտ տեղեկություններ, բացատրություններ, հիմնավորում, պարզաբանում են բուն նախադասության բովանդակության հետ կապված այլևայլ հանգամանքներ, շարահյուսորեն չեն կապվում հիմնական նախադասության հետ և հնչերանգով առանձնանում են խոսքային տվյալ շղթայից։

Քանի որ ՆԴԿ-ները շարահյուսորեն չեն կապվում հիմնական նախադասության հետ, հետևաբար, դրանք կարելի է հանել բուն նախադասության կազմից՝ առանց նրա քերականական ամբողջականությունը խախտելու։ Բայց որոշ վերապահումով պետք է մոտենալ այն հարցին, թե ՆԴԿ-ի հեռացման դեպքում չի՞ խաթարվի հիմնական նախադասության իմաստային կողմը։ Ինչպես նշվեց, ՆԴԿ-ներն իրենց շատ կիրառությունների դեպքում իմաստային ազդեցություն են կրում հիմնական նախադասության բովանդակությունից և ստանում են վերաբերմունքային որոշ երանգավորում՝ դառնալով հեղինակային տվյալ խոսքի ենթատեքստի կրողներ, իսկ շատ դեպքերում (մասնավորապես բանաստեղծական խոսքում) ՆԴԿ-ների միջոցով արտահայտվում է տվյալ խոսքային շղթայի հիմնական բովանդակությունը, գաղափարը։ Հեղինակը հաճախ ծավալվում ու խորանում է գաղափարական այն ոլորտում, որը նախապես ներկայացրել է ՆԴԿ-ով։

Այսպիսով, ՆԴԿ-ների գործածությունը խոսքի մեջ ինքնանպատակ չէ, այլ անհրաժեշտ է, հակառակ դեպքում, դրանք որպես շարահյուսական միավորներ դուրս կմղվեին լեզվից, մինչդեռ ժամանակակից հայերենում դրանց գործածությունը մեծ է։ Հիմնական նախադասության կազմից ՆԴԿ-ի հեռաց-

ման դեպքում բուն նախադասության քերականական ամբողջականությունը չի խախտվի (պատճառը՝ բուն նախադասության և ՆԴԿ-ի միջև շարահյուսական կապի բացակայությունը), սակայն, իմաստային առումով, հիմնական նախադասությունը չի ունենա այն ամբողջական արտահայտությունը, ինչ որ ունի։ ՆԴԿ-ների գործածությունը խոսքի մեջ պայմանավորված է միմիայն այս իմաստային կապով, և սրանով է պայմանավորված դրանց գոյությունը լեզվում։

ՆԴԿ-ները խոսքի մեջ մտնելու եղանակներով տարբեր են լինում.

1. ՆԴԿ-ները հիմնականում հանդես են գալիս առանց շաղկապների։ Այս դեպքում դրանք ինքնուրույն նախադասություններ են և նախադասության հետ քերականորեն չկապվող արտահայտությունների մեջ շարահյուսական տեսակետից ամենաինքնուրույններն են։ Դրանք կարող են լինել պարզ նախադասություններ, օրինակ. «—Բացի ինձանից ուրիշ ո՞վ կարող է լինել, հոգիս,— ասաց Գ. Զաքարյանը առանց մի որևէ կասկած տանելու կնոջ (մանկահասակ կինը նրա ամուսինն էր) անսովոր այլայլմունքի վերա» (ՆԴ, ԵԺ, 1, 304)։ Կարող են լինել բարդ նախադասություններ՝

ա) Համադասական. «...Ինձ թվում է, ես զգում եմ, որ գուք... (պանի Զդանևիչի դեմքը հոգեկան մի սուր ցավից ծամածռվեց, և նա մեծ դժվարությամբ ավարտեց ասելիքը) նպաստավոր գաղափար չունիք իմ մասին...» (ՆԴ, ԵԺ, 3, 531)։

բ) Ստորադասական. «Եթե բոլորն էլ օդաշուի պես շուռ գային դեպի աստղերը, և ջրվորը լսեր կշտացած հողի թեթև տնքոցը, մեղվապահը չբռներ հեռու սարափեշերին բացվող նեկտարածաղկի բուրո՞մը... (Նրա հրավերն այնքան թաքուն է, որ ուրիշների, ոչ մեղվապահների համար նեկտարածաղկի նույնիսկ փունջը չի բուրում), կլիներ մի անհամ, անհա՞մ, անվերջ անհամ աշխարհ» (ՀՄ, 0, 19)։

ՆԴԿ-ները կարող են լինել նաև անդեմ, անենթակա և այլ կարգի նախադասություններ։ Առանց շաղկապների նախադասության կազմում ընդգրկված ՆԴԿ-ները կարող են ունենալ նախադասության համապատասխան անդամի ձևը։ Այսպիսի ՆԴԿ-ները շարահյուսորեն չկապվելով հիմնական նախադասության հետ՝ միայն ձևով են համընկնում նրա այս կամ այն անդամի հետ։ Նախադասության տվյալ անդամի արտահայտած իմաստը, որոշ դեպքերում, հեղինակային հիմնական խոսքի մեջ կարող է դիտվել լրացուցիչ, համեմատաբար անկարևոր, և այդպիսի դեպքերում դրանք նախադասություն են ներմուծվում ներդրությունների ձևով՝ կորցնելով հիմնական նախադասության հետ ունեցած շարահյուսական կապը՝ պահելով, սակայն, իրենց բովանդակությունը, օրինակ. «—Ձեր գնալուց հետո Սաշան (բժիշկ եղբայրը) գնաց նրանց էլ նայեց» (ՆԴ, ԵԺ, 2, 585)։

2. ՆԴԿ-ները խոսքի կազմում կարող են ընդգրկվել շաղկապների օգնությամբ.

համադասական. «—Ա՜, Թոմաս Դասպարի՛չ, այդ դո՞ւ ես... Բարև (ու մեկնեց նրան ձեռքը)» (ՆԴ, ԵԺ, 2, 170).

ստորադասական. «—Դուք, որ առանց շահախնդրության մտել եք մեր «եղբայրության» մեջ (որովհետև պաստորը փորձով գիտեր, որ այդ տեսակ հավատափոխները հազվագյուտ էին), դուք չպետք է արատավորեք ձեր անբիծ անունը...» (Մ, ԵԺ, 1, 40)։

Շաղկապների օգնությամբ խոսքի մեջ մտնող ՆԴԿ-ներն աչքի չեն ընկնում իրենց համեմատական ինքնուրույնությամբ, և դրանց ու հիմնական նախադասության միջև եղած իմաստային կապն ավելի նկատելի է։

ՆԴԿ-ները կարող են գործածվել հիմնական նախադասության մեջ կամ վերջում։ Ի տարբերություն միջանկյալ կառույցների, ՆԴԿ-ները բուն նախադասությունից առաջ չեն կարող դրվել (բացառությամբ դրամատիկական ստեղծագործությունների մեջ ՆԴԿ-ների կիրառությունների), և դա բնական է. ՆԴԿ-ները պարունակում են լրացուցիչ տեղեկություններ, դիտողություն-

ներ հիմնական նախադասության կամ նրա որևէ անդամի վերաբերյալ, հետևաբար, պետք է գործածվեն հիմնական նախադասության մեջ կամ դրանից հետո։ Եթե ՆԴԿ-ն վերաբերում է հիմնական նախադասության որևէ անդամին, ապա դրվում է դրանից անմիջապես հետո, հաջորդում է նրան, օրինակ. «Պ. Դարասիմ Զաքարյանը (այդպես էր ներս մտած մարդու անունը) մոտեցավ նրան, կանգնեց նրա մոտ և, ձեռքերը դարսելով հետևը, սկսեց ժպտալով նայել նրան, որը դարձյալ նրան չէր տեսնում» (ՆԴ, եժ, 1, 303)։

Այս երևույթը որպես կանոն տարածվում է ներդրյալ բառերի և բառակապակցությունների վրա։ Եթե ՆԴԿ-ն վերաբերում է ամբողջ նախադասությանը, կարող է ընկած լինել և՛ նրա մեջ, և՛ նրանից հետո, օրինակ. «Մորս և ծառայի օգնությամբ արդեն հագնվել և լվացվել էր (առավոտները նա միշտ վաղ է զարթնում. առհասարակ շատ քիչ է քնում)» (ՆԴ, եժ, 2, 181)։

Միջադաս են լինում հիմնականում այն ՆԴԿ-ները, որոնք խոսքի մեջ են ընդգրկվում շաղկապների միջոցով։ ՆԴԿ-ները խոսքային շղթայի մեջ կարող են ընկած լինել նախորդող և հաջորդող նախադասությունների միջև։ Այս դեպքում դրանից անջատվում են վերջակետերով։ Հիմնականում վերջակետերով անջատվում են համեմատաբար ծավալուն ներդրությունները։ Վերջակետերով կարող են անջատվել նաև այնպիսի ներդրությունները, որոնք աչքի չեն ընկնում տվյալ խոսքային շղթայի բովանդակության հետ ունեցած իմաստային սերտ կապով և այս տեսակետից հանդես են բերում համեմատական ինքնուրույնություն, օրինակ. «Պարզապես Ռևազի ոչխարը Ռևազի դռներին չէր, և կինը Ռևազին հրեց փնտրելու։ (Սարսափելի մի կին էլ Ռևազն ուներ)» (ՀՄ, 0, 33)։

Այսպիսով, ժամանակակից հայերենում ՆԴԿ-ների իմաստային քննությունը ցույց է տալիս, որ դրանք մեծ նշանակություն ունեն խոսքի ամբողջական արտահայտման գործում և միջանկյալ կառույցների հետ միասին օժանդակում են դրան՝ դառնալով խոսքի լիարժեք արտահայտման կարևոր միջոցներ։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊՍ, եժ—Պարույր Սևակ, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1972։
ՆԴ, եժ—Նար-Դոս, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1955։
ՀՄ, 0—Հրանտ Մաթևոսյան, Օգոստոս, Երևան, 1967։
Մ, եժ—Մուրացան, Երկերի ժողովածու, հ. 1, 2, Երևան, 1961։
ԴԴ, եժ—Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1955։

ВСТАВНЫЕ ВЫРАЖЕНИЯ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

АВЕТИК МАРУТЯН

Резюме

Вставным предложениям и выражениям в современном армянском языке до сих пор не уделялось должного внимания. Вставные предложения и конструкции в речи имеют особо важное значение. Следовательно, их классификация и всестороннее изучение в системе языка представляют определенный научный интерес. Рассматриваемые категории в современном армянском языке выявляют разнообразные смысловые значения и вместе с вводными конструкциями помогают полному выражению речи.